DOI:10.56653/18290361-2024.14-30

Քրիստինե Արզումանյան

Հայաստանի պետմության թանգարան
arzumanyanqristine22@gmail.com

ԱՆԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ*

Հիմնաբառեր. Անի, 19-20-րդ դդ., Ն. Մառ, պեղումներ, հայկական ինքնություն, հայ հասարակության ոգևորություն, հայ մտավորականության արձագանքներ:

Ներածություն

«Կովկասը կարող է պարծենալ ոչ միայն այն զարդերով ու գանձերով, որոնցով օժտել է իրեն բնությունը, այլև նրանցից լավագույններին հավասար, Կովկասը կարող է պարծենալ Երկնքի մի կուլտուրական պարգևով՝ Անիի ավերակներով, հնագիտական պսակի յուր այդ խոշոր մարգարիտով»:

Նիկողայոս Մառ
(ըստ՝ Շիրմազանյան և այլք 1964, 41):

Հայագետ Նիկողայոս Մառի[1] գլխավորած հնագիտական արշավախմբի՝ Անիում իրականացրած գիտական գործունեության արդյունքը եղավ շրջադարձային հայ հասարակական, մշակութային կյանքի և գիտական մտքի զարգացման համար, պեղումներ, որոնք ոչ միայն նոր շունչ հաղորդեցին Անիի ավերակներին, այլև դարձան յուրահատուկ միջավայր հայ ինքնության վերածնման ճանապարհին[2]:

Ներկայացվող աշխատանքի նպատակն է անդրադառնալ այն հարցին, թե 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Անիում իրականացված պեղումներն

* Ստացվել է 26.06.2024, ուղարկվել է գրախոսման 09.07.2024, ընդունվել է տպագրության 01.11.2024:

1 Մառը մոտ 600 գործերի հեղինակ է, որից բացի նրա մեծ թվով գործեր՝ լուսանկարներ, գծագրեր, օրագրեր, կորել է 1917 թվականին, երբ դրանք ուղարկվում էին Թիֆլիս՝ Կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտ, այնտեղ արխիվ ստեղծելու նպատակով, սակայն նյութերի մի մասը տեղ չէր հասել, մի մասը անհետացել է 1918 թվականին, թուրքերի կողմից Անիի գրավման ժամանակ (Տես Արսեն Բոբոխյան, Նիկողայոս Մառի արխիվը Սանկտ Պետերբուրգում, «Էջմիածին» հանդես, 2017 թ., էջ 154-155):
Ուշագրավ են գիտնականի գործերը՝ նվիրված հայկական վիշապ-քարակոթողների ուսումնասիրությանը (Տես Н. И. Марр, Я. И. Смирнов, Вишапы, Труды государственной Академии истори материальной культуры, 1931 г.): Մառը, հայ հնագետների մասնակցությամբ իրականացրել է հայկական մեծ թվով բնակավայրերի ուսումնասիրությունը:

2 Շնորհակալություն ենք հայտնում, ԳԱԱ ՀԱԻ տնօրեն Ա. Բոբոխյանին՝ աջակցելու և Ն. Մառի արխիվից հավաքագրած, աշխատանքի հետ առնչվող նյութերի տրամադրման համար:

ինչպես և ինչքանով նպաստեցին հայկական ինքնության խնդրի քննարկման աշխուժացմանը:

Փորձում ենք նախ ներկայացնել հայ հասարակության միջավայրում պեղումների ընթացքում նկատելի ոգևորությունը, աշխուժությունը, որն արտահայտվում էր ամենատարբեր՝ ֆինանսական, նյութական, հոգևոր աջակցությամբ: Ապա անդրադառնում ենք պեղումների վերաբերյալ հայ մտավորականության արձագանքներին:

Հայաստանը Անիի պեղումների նախօրեին

19-րդ դարի վերջը և 20-րդ դարի սկիզբը դժվար ժամանակաշրջան էր հայ ժողովրդի կյանքում: Արևմտահայությունը՝ Օսմանյան իշխանության, արևելահայությունը՝ ցարիզմի սոցիալ-մշակութային և քաղաքական ճնշման ներքո էքզիստենցիալ պայքար էր մղում, որի արդյունքում ինքնության վերահաստատման նոր կարիք էր առաջացել: Արևմտահայության շրջանում գոյության պահպանման համար հիմնվում են հայ քաղաքական կուսակցություններ, աշխուժանում են քաղաքական և մշակութային մամուլը: Ընդհանրապես զգալի աշխուժություն էր նկատվում գիտության բնագավառում, այսպես օրինակ, հիմնվում է «Ազգագրական հանդես»-ը, որը մեծ դեր է խաղում հայկական ինքնության առանձնահատկությունների փաստագրման տեսանկյունից: Ահա այսպիսի և նման իրադարձություններին սերտ՝ սկսվում են Անիի պեղումները 1892 թ. (նկ. 1):

Պեղումների շարժառիթը, 1889 թ. Փարիզում ֆրանսիացի հնագետ Ժակ դը Մորգանի «Գիտական առաքելություն Կովկասում» գրքի հրատարակումն էր, որով պայմանավորված՝ Կայսերական հնագիտական հանձնաժողովը սկսեց հետաքրքրվել հայկական հնություններով և որոշվեց պեղումներ սկսել հենց Անիում[3], որը պետք է գլխավորեր երիտասարդ գիտնական Նիկողայոս Մառը: Դեպի Անի հնագիտական արշավանքը սկսվեց 1892 թվականին՝ տևելով մեկ ամիս: Պեղումները շարունակվեցին նաև 1893 թվականին՝ հայտնաբերելով Աշոտաշեն պարիսպները: Արշավախումբը Հայաստան է գալիս 1904 թվականին, երբ բացվեց Անիի գլխավոր փողոցի մի մասը, իսկ 1905 թվականի պեղումները նշանավորվեցին Գագկաշեն տաճարի հայտնաբերումով, շարունակելով աշխատանքները հաջորդ երկու տարիներին ևս: Այսպես, 1909 թվականին պեղումներ էին իրականացվում Առաքելոց վանքի տիրույթում: Արշավախմբի հնագիտական առաքելությունը Անիում շարունակվում է 1910, 1911, 1912 թվականներին, իսկ հաջորդ տարի կազմակերպված արշավանքը նվիրված էր աշխարհիկ ճարտարապետության ուսումնասիրությանը, 1917 թվականին իրականացնելով միջնադարյան քաղաքի բացահայտման վերջին՝ 16-րդ արշավանքը (Մնացականյան 1969, 9-32):

---

3 Հետազոտություն իրականացնելու կենտրոնի ընտրությունը անշուշտ, պատահական չէր: Անին Անդրկովկասի միջնադարյան այն միակ քաղաքն էր, որը համարյա թե անաղարտ էր մնացել շուրջ կես հազարամյակ, և հենց այդ տեսակետից էլ մեծ հետաքրքրություն էր ներկայացնում հնագիտական ուսումնասիրությունների համար (Տես Ստ. Մնացականյան, Նիկողայոս Մառը և հայ ճարտարապետությունը, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1969 թ. էջ 7-8):

Մառի գլխավորած արշավախմբի մասնակիցները կոչվում էին անեցիներ (Վրույր 1979, 5)։ Այդ անեցիների վերնախավի խմբում էին Մառի կինը՝ Ալեքսանդրա Ալեքսեևնան, որդիները՝ Յուրին և Վոլոդյան, Արամ Վրույրը, կինը՝ Նունեն, նրանց որդիները և աղջիկը, Միքայել Վարդապետը, ճարտարապետ Թ. Թորամանյանը, Հ. Օրբելին, Աշխարհբեկ Քալանթարը, նկարիչ՝ Պոլտարացկին, այնուհետև, Նիկողայոս Բունիաթյանը, Տարագրոսը, Արտաշես Վրույրը՝ Ա. Վրույրի որդին, Գ. Զուբինովը, Ն. Տոկարսկին և ուրշներ, որոնց վիճակված էր հինավուրց քաղաքի ուսումնասիրությունը (Վրույր 1979, 12) (նկ. 2)։

Անիի ավերակները որպես հայ հասարակության ներշնչման միջավայր

Ինչպես վերը նշեցինք, այն ժամանակ, երբ ընթանում էին Անիի պեղումները, հայ հասարակությունը կանգնած էր գոյության համար պայքարի և ինքնության կորսման վտանգի առջև։ Հենց այս ժամանակահատվածում Անիի բացահայտման առաքելությամբ կազմակերպվող հնագիտական աշխատանքները կարծես նոր ոգևորություն հաղորդեցին հայ հանրությանը։ Դրա վառ ապացույցն է պեղումների ընթացքում նրանց ուշադրությունը տարվող աշխատանքներին, հնարավոր օգնության ցուցաբերումը։ Մառը մշտապես ջերմ հարաբերություններ է ունեցել հայ մտավորականության և հայ կազմակերպությունների, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու հետ, որի վառ ապացույցն են վերջինիս մշտական այցելությունները Էջմիածին։ Մառը բազմիցս օգտվել է Էջմիածնի և Սևանի գրապահոցներից (Մնացականյան 1969, 6)։ Այս տարիներից Մառը ակտիվորրեն ներգրավվում է հայկական բնակավայրերի, հուշարձանների ուսումնասիրության աշխատանքներին։ Դեռևս 1892 թվականից այցելություններ է իրականացնում դեպի Խծկոնք, Բագարան, Շիրակավան, Արուճ, Մրեն, 1899 թվականին կարճատև պեղումներ սկսեց Դվինում, 1909 թվականին նախատեսելով սկսել նաև Գառնիի պեղումները, իսկ 1916-ին Հ. Օրբելու հետ սկսում է Վանի միջնաբերդի պեղումները (Մնացականյան 1969, 10-31)։

Ըստ Ն. Մառի՝ Անիի ուսումնասիրությունը հայության համար պետք է ունենա կարևոր նշանակություն։ Հետաքրքրական է, Ն. Մառը, Ս. Պետերբուրգի հայկական եկեղեցիների խորհրդի կողմից իրականացվող ներդրումների համար շնորհակալություն հայտնելով[4], 1905 թ. ապրիլի 10-ին պատասխան նամակում խոսում է հայ ժողովրդի համար Անիի պեղումների կարևորության մասին, նշելով, որ «Անիում պեղումների իրականացումը հրատապ է, անհրաժեշտ, քանզի արդյունքում կստացվի ոչ միայն տեսական գիտելիքներ՝ շնորհիվ հնագիտական և այլ նյութերի, այլև գործնական, գիտական և կրթական կարևորագույն նշանակություն հայ ժողովրդի և հայ եկեղեցու համար» (Мирзоян 1979, 96)։

Առհասարակ Մառը մեծ սեր և հարգանք էր վայելում հայության շրջանում, և թե ինչպիսի մեծ հարգանք ուներ հասարակ ժողովուրդը դեպի նրա գլխավորած

4 «Որոշում. 2000 ռուբլի հատկացնել քաղաքում քանդված եկեղեցիների պահպանման համար, պրոֆեսոր Մառին», 1904 թ. դեկտեմբերի 15, Ս. Պետերբուրգ (Տե՛ս С. Мирзоян, Письма Н. Я. Марра об археологических раскопках в Ани 1904-1917, 1979, N 2, стр. 96)։

գործը, վկայում այն հանգամանքը, որ նույնիսկ հասարակ գյուղացիները իրենց չնչին խնայողություններից աջակցում էին Անիի պեղումների դրամական ֆոնդին: Մառը դեռևս 1906 թ. գրում է. «Անցյալ ամառ Անիի թանգարանը դիտել և իմ կիրակնօրյա հայերեն լեզվով տրվող բացատրությունները՝ ուշադիր կերպով լսել են ավելի քան 500, մեծ մասամբ անգրագետ գյուղացիներ, որոնցից շատերը Անի էին եկել բավականին հեռու, նույնիսկ 30 վերստ հեռու գտնվող գյուղերից» (Մնացականյան 1969, 28-29):

Ուշագրավ է, որ Նիկողայոս Մառը աշխատանքներին զուգահեռ կազմակերպում էր դասախոսություններ, որոնք վերաբերում էին Անիի պեղումների արդյունքներին և որոնք լայն արձագանք էին գտնում հայ հասարակության շրջանում (Մնացականյան 1969, 18): Ինչպես նկարագրում են ժամանակակից թերթերը («Մշակ», «Մարտակոչ» և այլն), տոմսերը նախօրոք սպառված էին լինում, մինչդեռ լսել ցանկացողները՝ մի քանի անգամ ավել էին լինում, քան կարող էր տեղավորել դահլիճը: Եվ շատ հաճախ հաղթահարելով դռնապանների դիմադրությունը, մարդիկ ներս էին խուժում, գրավում բոլոր միջանցքները և նույնիսկ բեմը: Բանասեր Ս. Մալխասյանցը «Մարտակոչ» թերթում գրում է. «Այդ դասախոսությունը Ն. Մառը կարդաց ունկնդիրների խոսուն բազմության առաջ: Շատերը, դահլիճում տեղ չլինելու պատճառով դուրսը մնացին» (Մալխասյան 1924): Լավ գիտակցելով, որ նրան լսելու էին հավաքվում ամենատարբեր խավի մարդիկ, Մառը միշտ մտահոգված էր իր զեկուցումները բոլորի համար հետաքրքիր դարձնելու հարցով: Նրա բոլոր գործերը, ուսումնասիրությունները այսօր պահպանվում են ՌԴ-ի երկու արխիվներում[5]՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արխիվի սանկտ-պետերբուրգյան բաժանմունքում և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Նյութական մշակույթի պատմության ինստիտուտում (նկ. 3): Ի դեպ, Անիում կարդացված դասախոսություններից շատերը հետագայում հրատարակվելու էին: 1934 թ. հրատարակված հայտնի «Անի»[6] աշխատության գերակշռող մասը

5 Ն. Մառի արխիվը գտնվում է Ս. Պետերբուրգի երկու հաստատություններում՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արխիվի սանկտպետերբուրգյան բաժանմունքում և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Նյութական մշակույթի պատմության ինստիտուտում: Այստեղ, 1936 թվականին հիմնվել է «Ն. Յ. Մառի կաբինետը» (Տես В. А. Миханкова, Работа кабинета Н. Я. Марра за 1936-1944 гг., стр. 77-86, Краткие сообщения института истории материальхой культуры имени Н. Я. Марра, Вып. 15, Академия наук союза ССР, 1947 года): Հիշատակենք, որ Մառի անվան «կաբինետներ» են ձևավորվել Հայաստանում՝ Երևանի պետական համալսարանի Բանասիրության ֆակուլտետում, սկսած 1943 թվականից, այնուհետև Պատմության ֆակուլտետում և ՀՀԳԱ Լեզվի և Արևելագիտության ինստիտուտներում: ՌԳԱ Նյութական մշակույթի պատմության ինստիտուտի արխիվը ունի ձեռագրերի բաժանմունք (հարուստ նյութեր են պահպանված հայ բանասիրությունից, վիմագրագիտությունից, ձեռագրագիտությունից), նամակների և հուշերի պահպանության հատվածներ, ինչպես նաև Լուսանկարչական արխիվից (Տես Արսեն Բոբոխյան, նշվ. աշխ., էջ 157-166, ինչպես նաև Г. В. Длужневская, Фонды фотоархива института истории материальхой культуры РАН):

6 Աշխատությունը ի սկզբանե ձևավորվել էր Սանկտ Պետերբուրգի համալսարանում հեղինակի կողմից իրականացված դասընթացների և դասախոսությունների նյութերի հիման վրա: Այն նկարագրում է Անիում պեղված շինությունների, ինչպես նաև հնագիտական մեծ թվով գտածոների նկարագրություններ: Մանրամասնորեն ներկայացվում են մասնավորապես կրոնական շինություններն ու առարկաները (Տես Марр Н., Ани.

կազմված է հենց այս զեկուցումների տեքստերի հիման վրա, որոնցից մեկի առաջաբանում էլ գրում է, որ «Գիտնականի խնդիրն է ոչ թե իջնել գիտության բարձունքներից, այլ ընդհակառակը, բարձրացնել լսողներին մինչև այդ բարձունքները: Իմ կարծիքով այդ միակ թույլատրելի սկզբունքն է, որով պետք է ղեկավարվի գիտնականը, երբ նա հանդես է գալիս լայն հասարակության առջև» (Մնացականյան 1969, 18): Մառի այս դասախոսությունների նշանակությունը շատ մեծ էր, երբ հայ և արտասահմանյան մտավորականները մեծ հետաքրքրությամբ գալիս դիտում էին աշխատանքները, կամ հասարակ գյուղացիները իրենց ներուժի չափով ֆինանսական թեկուզ չնչին աջակցությունն էին ցուցաբերում հնագետների աշխատանքին: Ընդհանուր առմամբ, Անիի պեղումների կարևորագույն արձագանքը եղավ այն, որ այս դասախոսությունները բավականին նպաստում էին հայ հասարակ ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացմանը, նշանակալից խթան հանդիսանում ազգային մշակույթի ծանոթության, ուսումնասիրման գործին (Մնացականյան 1969, 18): Հետաքրքիր է, որ 1910 թ. Մառի հիմնած «Անիի մատենաշարում» լույս է տեսել Հ. Օրբելու կազմած Անի քաղաքի ուղեցույցը, այն հաղորդում է Անիի անցյալի հուշարձանների մասին, ներկայացնում Անիի հնությունների գիտական նկարագրությունը; Մեծարժեք է նրա կազմած Անիի թանգարանի կատալոգը, իսկ մյուս «Անիի ավերակները» աշխատանքում ամփոփել է իր ողջ գիտելիքները Անի պատմության և հուշարձանների մասին, որոնք իրազեկեցին հայ հանրությանը միջնադարյան քաղաքի մասին (Орбели 1911, 15):

Ինչպես վերը նշեցինք, հայ հասարակության ֆինանսական ներդրումները ևս խոսում են պեղումների վերաբերյալ չափազանց մեծ հետաքրքրության մասին, «Հայ հասարակությունից ներհոսեցին նյութական և ֆինանսական միջոցներ, որոնք անշուշտ կնվիրվեն Անիի գիտական ուսումնասիրությանը»,- նամակներից մեկում գրում է Մառը (Баликян և այլք 1982, 92): Հ. Օրբելին նշում էր, որ պեղումների ֆինանսական օժանդակության զգալի հատվածը իրականացվում էր Ս. Պետերբուրգի հայկական եկեղեցիների խորհուրդը, այդ թվում առանձին անհատներ և կազմակերպություններ (Орбели 1911, 37 сноска):

Հետաքրքրական է, որ Մառը Անիում թանգարան հիմնելու կապակցությամբ իր՝ 1904 թ. դեկտեմբերի 10-ին Սանկտ Պետերբուրգի հայկական եկեղեցիների խորհրդին գրած նամակներից մեկում, նշում է, որ «Յակով Քրիստափորովիչ Զավրիևը[7], շինարարության համար, ինձ տվեց 950 ռուբլի, որը հավաքել էր Բաք-

Книжная историа города и расквпки на месте городиша, Государственное социально-экономическое издательство Ленинград, Москва, 1934 г.):

7 Հակոբ Զավրիև՝ հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, բժիշկ, ազնվական, ՀՅԴ կուսակցության անդամ: 1902 թվականին աշխատանքի է անցել Բաքվում՝ որպես Բալախանիի շրջանի հիվանդանոցի գլխավոր բժիշկ, որտեղ էլ մտերմացել է Հովհաննես Քաջազնունու և Նիկոլ Դումանի հետ: Անցել է Արևմտյան Հայաստան և Մուշում կարողացել է հիմնել հիվանդանոց, բուժօգնություն կազմակերպել ժողովրդի համար, այդ թվում քարոզելով ազատագրական պայքար: Եվրոպայում իր գործունեությամբ փորձել է տերությունների ուշադրությունը ուղղել Հայկական հարցի վրա: Առաջին աշխարհամարտի տարիներին զինվորագրվել է կամավորական բանակներում, կռվել է Անդրանիկի ջոկատում:

վում, այն հայերի մեջ, ովքեր համակրում էին Անիի ուսումնասիրության գործին» (Мирзоян 1979, 93)։ Այնուհետև խոսում է այն մասին, որ ինքը հույս ունի, որ պեղումների իրականացման համար ներդրումների «մի լավ մասը կտրամադրվի համակրող հայերից», շարունակելով, «Անիի ուսումնասիրությունը կարևոր է և հայ ժողովրդի, և հայոց եկեղեցու համար, քանզի հազար ու մի եկեղեցիների քաղաք համարվելով, իսկապես եկեղեցիների առատությունը մեծ աղբյուր է հայոց եկեղեցու պատմության հարստացման համար» (Мирзоян 1979, 93)։

Մառի գլխավորությամբ արշավախումբը մեծ հոգատարությամբ էր վերաբերվում ավերակներին, գտնված իրերին, ինչն անշուշտ, ուսանելի օրինակ կարող էր լինել բոլորի համար (նկ. 4)։ Այն իր անմիջական արձագանքն էր գտնում շրջակա գյուղերի բնակչության մոտ և պատահական չէ, որ նրանք կամովին, իրենց նախաձեռնությամբ Անի էին վերադարձնում այն քարերը, որոնք տարիներ առաջ իրենք կամ իրենց նախնիները տարել էին բնակելի կամ տնտեսական այլևայլ կառուցվածքներում օգտագործելու համար (Մնացականյան 1969, 26)։

Պեղումներին իրենց մեծ աջակցությունն են ունեցել հասարակ գյուղացիները, մշակներ, ովքեր իրենց գյուղգործիքներով գալիս էին և վարձատրությամբ հնձում ավերակների վրայի բուսածածկ տարածքները, և դա անում էին մեծ հոգատարությամբ, զգուշությամբ և կարծես իրենք իրենց զգում էին ներգրավված այդ մեծ գործին։ Այս կապակցությամբ Թ. Թորամանյանը, որն առաջին անգամ եկավ Անի 1903 թվականին և պեղումներին սկսեց մասնակցել 1904 թվականից (Ղաֆադարյան, 1964, 17), իր հուշերում գրում է. «1908 թ. հունիսի 3-ին ձեռնարկելով պեղման նախնական գործողությանց 40-50 մշակներով, հետևեալ շաբթուն անոնց թիվը արդեն հարյուրի մոտ էր։ Երկու երեք տարիներին ի վեր բնության աղետներե տառապող հուսահատ գյուղացի մշակները, ուրախ, զվարթ աղաղակներով բահ ու բրիչը շալակած կվազեն իրենց նախընթաց տարիներու սիրելի ու հարգելի պրոֆեսորի գործին, այն պրոֆեսորի, որ առատորեն պիտի տար իրենց սփոփանք և մխիթարություն, ինչ որ չէին ստացած անձրևի կաթիլներեն, պիտի ստանային քրտնքի կաթիլներով… մշակները փնտրում էին ձգտելով գտնել ծաղկի և մարգագետնի փոխարեն ավելի գեղեցիկ, վսեմ բան… որոնք ձոնելով իրենց պրոֆեսորին իրական հաճույք կպատճառեր անոր» (Թորամանյան 1948, 264-265)։

Հայ հոգևորականության, մտավորականության և հասարակ գյուղացու նվիրատվությունների մասին հետաքրքիր մի դեպք է պատմում Մառը. «Անհայտ մի անձնավորություն, որն ինչպես պարզվեց հետագայում, Խաչիկ վարդապետն է եղել, ճարտարապետ Թորամանյանի միջոցով ուղարկել էր հարյուր ռուբլի Անիի ճարտարապետական բացառիկ հորինվածքներից մեկի՝ Հովվի եկեղեցու վերականգնման համար, բայց հուշարձանն այնքան խիստ էր վնասված, որ ես սկզբում մտածեցի հրաժարվել այդ գործից և ետ վերադարձնել ուղարկված դրամը։ Սակայն շնորհիվ Թորամանյանի ղեկավարության և վարպետ Համայակի, որը մեծապես աջակցել է Անիում թանգարանային (նկ. 6) կառույցների հիմնման գործին, կառուցվածքի մի զգալի մասը վերականգնվեց» (Մնացականյան 1969, 26-27)։

Անիի պեղումները և հայ մտավորականության արձագանքները

Անիի պեղումների տարիներին, հայ մտավորականության ոգևորությունը առավել նկատելի էր, ինչն արտահայտվում էր ինչպես ֆինանսական, նյութական աջակցությամբ, այնպես էլ ոգևորիչ տպավորություններով, մեծ հեռանկարների պատկերացումով:

Դեռևս պեղումների սկզբնական շրջանում, մշտապես էքսկուրսիաներ էին կազմակերպվում դեպի Անի: Դեռևս 1895 թ. հունիսի 6-ին Կոմիտասը Մ. Սմբատյանցին[8] դիմում է ուղղում, որով թույլտվություն է խնդրում Ճեմարանի աշակերտների հետ Անի քաղաք էքսկուրսիա մեկնելու համար. «Եթէ կարելի է, խոնարհաբար խնդրում եմ, թոյլատրեցէք ինձ Ճեմարանի աշակերտների հետ գնալ Անին տեսնել, որն և միևնոյն ժամանակ ինձ համար կլինի ամառնային օդափոխութեան միջոց. Ճեմարանի վարչութիւնը ամառն այստեղ մնացող աշակերտաց երկու խմբի բաժանեց, որոնցից մէկի առաջնորդողը ես պէտք է լինեմ: Ուստի խնդրեմ Ձեր Բարձր Սրբազնութեան տնօրէնութիւնը» (Բոբոխյան 2017, 36): Կոմիտասը երգչախմբի հետ 1903 թ. այցելում է Անի, որտեղ նրանք ծանոթանում են հուշարձաններին, ներկա գտնվում հնագիտական աշխատանքներին: Ուշագրավ է, որ այցելության ժամանակ Մայր տաճարում Ն. Մառի, Հ. Օրբելու, Թ. Թորամանյանի[9], Ա. Վրույրի[10] և այլոց ներկայությամբ նա կատարում է իր «Պատարագը», որից հետո Ն. Մառը հուզված մոտենում է Կոմիտասին և շնորհակալություն հայտնելով նրան ասում. «Էջմիածնում և Թիֆլիսում ես շատ պատարագների եմ ներկա գտնվել, շատ երգչախմբեր եմ լսել, բայց այսպիսի պատարագ առաջին անգամ եմ լսում... Կարծես դարավոր տաճարը, ամբողջ Անին էր մասնակցում սրբազան երգեցողությանը» (Բոբոխյան 2017, 38):

---

8 Հայ բանասեր, պատմաբան, հոգևորական, տեղագիր-ճանապարհորդ: 1870-1887 թվականներին եղել է Էջմիածնի սինոդի անդամ, իսկ 1886 թվականին վարել է Գևորգյան ճեմարանի վերատեսչի, 1887-1895 թվականին Շամախիի, Բաքվի և Անդրկասպյան թեմի առաջնորդի, 1895 թվականին Ամենայն Հայոց կաթողիկոսության տեղապահի պաշտոնները:

9 Մասնավորապես ուշագրավ է Թորամանյանի գործունեությունը պատմա-ճարտարապետական լուսանկարչության բնագավառում: Նա չափազանց բծախնդիր էր լուսանկարչության մեջ: Մշտապես սպասում էր հարմար լուսավորության հուշարձանը լուսանկարելու համար և սիրում էր լուսանկարել հուշարձանը առանց այն «գեղեցկացնելու», այսինքն փորձում էր այն ներկայացնել իր թերություններով (Տես Արտաշես Վրույր, Անիում, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1979) : Գալով Անի, նրա առջև տարածվում էր բարձրարվեստ ճարտարապետական կոթողներով մի քաղաք, որը անակնկալ էր Թորամանյանի համար «այնքան գեղարվեստական թանկագին գոհարներով լեցուն անկյուն մը, որ իբր օվազիս, Արևելքի հնադարյան խավարի մեջ, ծլած ու ծաղկած էր»:

Թորամանյանը մշտապես հովանավորվում էր Ն. Մառի կողմից և որևէ աշխատանք գրելիս, անպայման պետք է ստանար պրոֆեսորի հավանությունը (Տես Կարո Ղաֆադարյան, Թորոս Թորամանյան, Հատոր 1, «Պատմա-բանասիրական» հանդես, 1964):

10 Հայ բեմի դերասան, Անիի պեղումների մասնակից Արտաշես Վրույրի հայրը: Ա. Վրույրը ստեղծել է Անիի և շրջակա հուշարձանների մի ստվար ժողովածու: 1918 թվականին Կ. Պոլսում գտնվող նրա նեգատիվների շարքը կորավ անվերադարձ (Տես Արտաշես Վրույր, Անիում, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1979, էջ 40):

Ա. Մանանդյանը (Հ. Մանանդյանի եղբայրը) այս կապակցությամբ գրում է. «Եղբայրս այդ շրջանի իր անմոռանալի հիշողություններից մեծ գոհունակությամբ և հիացմունքով երբեմն պատմում էր Կոմիտասի ու Ճեմարանի ուսանողական մեծ խմբի հետ Անի գնալու մասին: Նա զգացված պատմում էր, թե ինչպես Կոմիտասը Անիի Մայր Տաճարում իր երգեցիկ խմբի հետ կատարել է պատարագի երգեցիկ մասի արարողությունը: Նա ասում էր, որ ինքը եղել է թե՛ ռուսական կենտրոններում, և թե՛ արտասահմանի մայրաքաղաքների օպերաներում, լսել է խոշորագույն ու առաջնակարգ երգիչների և խմբերի համերգները, սակայն այդպիսի երգեցողություն, որ վիճակված է եղել իրեն լսել Անիի Մայր Տաճարում Կոմիտասի ղեկավարությամբ, նա ոչ մի տեղ չի լսել: Նա հատկապես շեշտում էր, թե ինչպես ձայնի ալիքները Մայր Տաճարում որոշ չափով երկարում և ուժեղ կերպով տպավորվում էին մարդու ականջներում» (Բոբոխյան 2017, 39): Կոմիտասի ճեմարանական աշակերտներից Ս. Ոսկերչյանը գրում է. «Տղաները շատ գոհ էին մնացել 1903 թվականին Անի գնացած էքսկուրսիայից, որը գլխավորել էին Կոմիտասը և պատմության ուսուցիչ Հ. Մանանդյանը: Անիում նրանք ծանոթացել էին հնություններին, ներկա էին եղել պեղումներին: Կոմիտասն իր երգիչներով փորձել էր Անիի կանգուն մնացած եկեղեցիների հնչականությունը (որով և սքանչացել էր), եկեղեցում երգել էին իր մշակած պատարագի երգերից» (Բոբոխյան 2017, 39): Հետագայում Կոմիտասը մի քանի անգամ ևս այցելել է Անի և «Այցելությունների մատյան»-ում թողել գրություն՝ իր ստորագրությամբ (նկ. 5):

Անիի հնագիտական արշավախմբի գործունեության վերաբերյալ իր առանձնահատուկ տպավորությունն է հայտնում Հ. Առաքելյանը,[11] Անիի պեղումների կարևորության մասին խոսելով, «Մշակ» թերթում նա գրում է. «Եւրոպացի շատ ճանապարհորդներ և արևելագէտներ այցելել և նկարագրել են Անիի աւերակները, ինչպէս անգլիացի Քէր-Փորտէրը 1817-ին, Հէմիլթընը 1836-ին, գերմանացի Կոխը՝ 1837-ին, ֆրանսիացի Էօժէն Բորէն՝ 1838-ին, Թէոռիէ ճարտարապետը 1839-ին, յայտնի կովկասագէտ Աբիխը 1844-ին, ռուս Մուրավիէֆը՝ 1846-ին, ակադեմիկոս Խանիկօվը՝ 1848-ին, ակադեմիկոս Կէսնէրը՝ 1850-ին, ֆրանսիացի արևելագէտ Բրոսսէն՝ 1860-ին: Սրանք ամենքը նկարագրել են Անիի աւերակների այն մասը, որ գետնի վրա է, չըկասկածելով գուցէ, որ ամենահետաքրքրական և նշանաւոր մասը գտնվում է հողի տակ, ծածկված մարդկային աչքից: Այդ մասի յայտնագործման պատիւը և աշխատութիւնը, պեղումների միջոցով, պատկանում է ակադեմիկոս Ն. Մարրին, որին թէ հայութիւնը և թէ ընդհանուր գիտութիւնը երախտապարտ պէտք է մնայ յաւիտեան, ու որովհետև շնորհիւ նրա անխոնջ աշխատութեան և կատարած պեղումների՝ թէ հայագիտութիւնը, հայոց պատմութիւնը և թէ արևելագիտութիւնը ճոխացաւ նոր հարուստ տուեալներով և շատ սխալներ ևս սրբագրվեցին» (Առաքելյան 1914):

Հայ մտավորականության ֆինանսական աջակցության մասին փաստում են բազմաթիվ դեպքեր: Այսպես, 1905 թ. սեպտեմբերի 20-ին հաշվետվություն է ներկայացվում այդ տարվա պեղումների մասին և խոսելով Գագիկի տաճարի

11 Համբարձում Առաքելյան, «Մշակ» թերթի խմբագրապետ, սկսած 1892 թվականից:

հայտնաբերման մասին, նամակներից մեկում Մառը գրում է, որ միջոցները քանի որ սուղ են, արշավախումբը պետք է դադարեցնի աշխատանքները, միևնույն ժամանակ շեշտելով, որ «եթե չլիներ «Մշակ» թերթի խմբագիր Ա. Քալանթարի[12] ջանքերով հայ հասարակությունից հավաքված 500 ռուբլու ներդրումը, ապա պեղումները կդադարեցվեին ավելի շուտ» (Мирзоян 1979, 97)։ Այնուհետև Թ. Թորամանյանի հուշերից տեղեկանում ենք, որ Թիֆլիսի Ազգագրական ընկերությունը՝ Ե. Լալայանի գլխավորությամբ հայտարարել է Անիի պեղումներին աջակից լինելու վերաբերյալ, «Թիֆլիսի Ազգագրական ընկերությունը մտադրված է շինել Անիի կամուրջը, հյուրատունը և մի թանգարան, ուստի այս գործերուն ուսումնասիրության համար երկու շաբաթ առաջ եկավ պ. Ե. Լալայանը և դիմեց իմ խորհուրդներուս, հայտարարելով, որ ունի հինգ հարյուր ռուբլի պատրաստի դրամ և կուզեն ծախսել Անիի բարեզարդության և հնությանց պահպանությանց համար» (Թորամանյան 1948, 261)։ Տպավորիչ են Թորամանյանի հուշերը, պեղումների մասնակցելու տարիներին իր առջև բացվող Անին նկարագրելիս. «Ճակատագրապես մշտնջենական տխուր ամայության դատապարտված Անին, նախընթաց 3-4 տարիներու նման, այս տարի կրկին գործունյա ու կենդանի շրջանի մեջ մտավ, շեն քաղաքի մը տպավորություն կը թողու մեր փոքրիկ գաղթականության վրա, թեև ֆիզիկական զրկանքներ խիստ շատ կան, սակայն կազմված գիտնական և մասնագիտական ընկերային շրջանի եռանդուն գործունեությունը և օր ըստ օրե ակնախտիղ նորություններու հայտնագործությունները մոռացնելով ամեն զրկանք՝ անխառն բերկրությամբ կհամակեն մեր փոքրիկ հասարակությունը» (Թորամանյան 1948, 264)։

Եզրակացություն

19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբին Ն. Մառի ղեկավարությամբ իրականացված պեղումները Անիում մեծ աշխուժություն մտցրին հայ իրականության մեջ։ Այս պեղումները ժողովրդի ուշադրությունը բևեռեցին ոչ միայն պատմական հուշարձանների ուսումնասիրության և դրանց պահպանման հարցերի վրա, այլև նպաստեցին ազգային ինքնագիտակցության բարձրացմանը. երբ հնագետների կողմից բացահայտվում էր հնագիտական մեկ շերտ, իսկ հայության համար ինքնությամբ, պատմությամբ, մշակույթով հպարտանալու, հանդես գալու, վերահաստատվելու նոր ուղի։

Թեմայի հետազոտության ընթացքում նկատեցինք, թէ ինչպես ավերակները կարող են գրավիչ լինել և առաջացնել զգացողությունների խորություն, թէ ինչպես քաղաքը կարող էր ձեռք բերել գիտական, մշակութային, զգացական տեսանկյունից կարևորություն, և ինչպես այն կդառնար իր ներկա փուլում (իմացի՛ր պեղումների իրականացման ընթացքը) ներշնչման և ոգևորության դաշտ։ Անիի պեղումները զուտ հնագիտական առաքելություն չէր, այն ողջ հայոց պատմական անցյա-

12 Լինելով Ն. Մառի աշակերտը՝ Աշխարհբեկ Քալանթարը ևս եղել է Անիի հնագիտական արշավախմբում և մասնակցել Անիի պեղումներին։ Ղեկավարել է Անիում և Տեկորում իրականացված վերջին պեղումները։

լի, հիշողության և ինքնության խնդրի վերարծարծման դաշտ էր: Անիի արշավախմբի աշխատանքն իր հետքը թողեց ողջ կովկասյան և հայկական գիտական մտքի զարգացման վրա:

Անիում ձևավորված հայագիտական դպրոցը դարձավ այն հենքերից մեկը, որի հիման վրա զարգացավ 20-րդ դարի հայագիտությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ 1914 - Առաքելյան Հ., Մի փոքրիկ ճամփորդություն, Անի քաղաքի պեղումները, «*Մշակ*», N 179, օգոստոսի 15, 1914:

ԲՈԲՈԽՅԱՆ 2017 - Բոբոխյան Ա., Կոմիտասը և հնագիտությունը, *Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տարեգիրք*, հատոր Բ, 2017, 24-53:

ԹՈՐՈՄԱՆՅԱՆ 1948 - Թորոմանյան Թ., *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության*, 2-րդ ժողովածու, ԳԱ հրատարակչություն, Երևան, 1948:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1964 – Ղաֆադարյան Կ. Գ., Թորոս Թորոմանյան, «*Պատմա-բանասիրական հանդես*», Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիա հրատարակչություն, հատոր Ա, 1964, 15-24:

ՄԱԼԽԱՍՅԱՆ 1924 – Մալխասյան Ս., Տպավորություններ Ն. Մառի դասախոսությունից, «*Մարտակոչ*», 1924, N 136:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ 1969 – Մնացականյան Ստ., *Նիկողայոս Մառը և հայկական ճարտարապետությունը*, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1969:

ՇԻՐՄԱԶԱՆՅԱՆ 1964 – Շիրմազանյան Գ., Հովսեփյան Ա., Տպավորությունների երկու մատյան, «*Էջմիածին*», 1964:

ՎՐՈՒՅՐ 1979 – Վրույր Ա., *Անիում*, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1979:

БАЛИКЯН 1982 – Баликян О., Паскарева К., *Докладные записки Н. Я. Марра в археологическую камисию (1909-1915 гг.)*, 1982:

МИРЗОЯН 1979 – Мирзоян С., *Письма Н. Я. Марра об археологических раскопках в Ани (1904-1917 гг.)*, 1979:

ОРБЕЛИ 1911 – Орбели И., *Развалины Ани*, «Нева», С. Петербург, 1911:

Qristine Arzumanyan

History Museum of Armenia
arzumanyanqristine22@gmail.com

ANI'S EXCAVATIONS ON THE WAY OF REBIRTH OF ARMENIAN IDENTITY

Keywords: Ani, 19th-20th centuries, N. Marr, excavations, Armenian identity, enthusiasm of the Armenian society, reactions of the Armenian intelligentsia.

Ruins can be fascinating and evoke a depth of feeling. The city could gain importance from a scientific, cultural, emotional point of view, becoming a field of inspiration in the scientific and public environment during the study. The excavations of the medieval city of Ani, which began at the end of the 19th century, were a turning point for the development of Armenian public, cultural life and scientific thought, excavations that not only breathed new life into the ruins of Ani, but also became a unique environment for the revival of Armenian identity. At the time when the excavations were going on, steps of a new perception and revaluation of identity were observed in the Armenian reality, they

were noticeable in the fields of science, culture, press, politics and society, and this archaeological study aimed at the discovery of Ani brought its own enthusiasm into the Armenian reality. These excavations drew people's attention not only to the study of historical monuments and their preservation, but also contributed to raising national self-awareness. Ani's excavations were not just an archaeological mission, it was a field of re-examination of the entire Armenian historical past, memory and identity. The work of Ani's expedition left its mark not only on the development of Caucasian and Armenian scientific thought, but also paved a new direction for the development of Armenology, archaeology, handwriting, and historical architecture.

The Armenian studies school formed in Ani became one of the foundations on which Armenian studies of the 20th century developed.

Кристине Арзуманян

Музей истории Армении
arzumanyanqristine22@gmail.com

РАСКОПКИ АНИ НА ПУТИ ВОЗРОЖДЕНИЯ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ

Ключевые слова: Ани, 19-20 века, Н. Мар, раскопки, армянская идентичность, энтузиазм армянского общества, реакция армянской интеллигенции.

Руины могут быть завораживающими и вызывать глубокие чувства. Город мог бы приобрести значимость с научной, культурной, эмоциональной точки зрения, стать полем вдохновения и волнения в научной и общественной среде в ходе исследования. Раскопки средневекового города Ани, начавшиеся в конце 19 века, стали поворотным моментом в развитии армянской общественной, культурной жизни и научной мысли, раскопки, которые не только вдохнули новую жизнь в руины Ани, но и также стали уникальной средой для возрождения армянской идентичности. В то время, когда шли раскопки, в армянской действительности наблюдались шаги нового восприятия и переоценки идентичности, они были заметны в сферах науки, культуры, прессы, политики и общества, и данное археологическое исследование было направлено на Открытие Ани привнесло в армянскую действительность свой энтузиазм. Эти раскопки привлекли внимание людей не только к изучению исторических памятников и их сохранению, но и способствовали повышению национального самосознания. Раскопки Ани были не просто археологической миссией, это было полем переосмысления всего армянского исторического прошлого, памяти и идентичности. Работа экспедиции Ани оставила след не только в развитии кавказской и армянской научной мысли, но и открыла новое направление развития арменоведения, археологии, рукописи, исторической архитектуры.

Сформировавшаяся в Ани школа арменоведения стала одной из основ развития арменоведения 20 века.